



**ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆՂԱՆԱՔԱՆԱԿԱՆ
ԱՅՁԻ**

Օգոստոսի 24-ին Երևանի կենդանաբանական այգում մեկնարկեցին բնապահպանական ֆիլմերի բացօթյա ցուցադրություններ



Օգոստոսի 24-ին արդեն երրորդ անգամ Երևանի կենդանաբանական այգում մեկնարկեցին բնապահպանական ֆիլմերի բացօթյա ցուցադրությունները: Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ օգոստոսի 24-ին Երևանի կենդանաբանական այգում ցուցադրեցին «Ազահության մոլուցք» ֆիլմը, որը նկարահանվել է 2006 թվականին: Ֆիլմը պատմում է ապօրինի անտառահատումների և կանաչապատ տարածքների ոչնչացման մասին, որտեղ փորձագետները ներկայացնում են առաջարկներ՝ ապօրինի անտառահատումները բացառելու և հատված տարածքներում անտառային շերտերը վերականգնելու համար: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս ցուցադրությունից հետո տեղի ունեցավ ֆիլմի հանրային քննարկում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչների և հանդիսատեսի հետ, որի ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչ Վարդան Մելիքյանը պատասխանեց հանդիսատեսին հետաքրքրող բազմաթիվ հարցերի: Նշենք, որ բացօթյա կինոդիտումները Երևանի կենդանաբանական այգում շարունակական բնույթ կունենան:



Պաղպաղակի օրը՝ Երևանի կենդանաբանական այգում



Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) և Երևանի կենդանաբանական այգին օգոստոսի 4-ին յուրահատուկ նվեր մատուցեցին երեխաներին. տեղի ունեցավ «Պաղպաղակի օր» միջոցառումը: Կենդանի երաժշտություն, զվարճալի խաղեր, քաղցր մրցանակներ ու շատ-շատ պաղպաղակ, խորհրդանշական գնով՝ ընդամենը 50 դրամով: Փոքրիկները կարողացան իրենց

ամենասիրելի պաղպաղակը ձեռք բերել և վայելել մատչելի գնով. «Ես անչափ ուրախ եմ, քանի որ այս տարի արդեն բալիկներիս հետ երրորդ անգամ եմ այցելում կենդանաբանական այգի և ամեն անգամ հաճելի նորություններ եմ տեսնում այստեղ»,- իր խոսքում նշում է բազմազավակ մայր Անահիտ Վարդանյանը: Մելինեն, ով ընդամենը 4 տարեկան է, կենդանաբանական այգի էր այցելել իր տատիկի հետ՝ հատուկ պաղպաղակ համտեսելու նպատակով. «Այսօր թոռնուհիս հինգերորդ պաղպաղակն է ուտում և շատ ուրախ ենք թե՛ համեղ պաղպաղակի, թե՛ գեղեցիկ միջոցառումների համար, քանի որ նման գեղեցիկ պահերը այսօր մեր ազգին և մեր երեխաներին իսկապես անհրաժեշտ են»,- իր տպավորություններն է կիսում տիկին Ռոզան: Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից անցկացվեց խաղ-մրցույթ, որի տաղավարում երեխաները պայքարում էին գլխավոր մրցանակի՝ հեծանիվի համար: Բազմաթիվ երեխաներ մասնակցեցին մրցույթին, իսկ հաղթող ճանաչվեց 11-ամյա Ռադիկ Գաբրիելյանը, ով կենդանաբանական այգի էր այցելել ընկերոջ մայրիկի խորհրդով. «Ինձ խաղը շատ դուր եկավ և ես բազմաթիվ հետաքրքիր հարցերի պատասխանեցի: Անչափ ուրախ եմ, որ հեծանիվը ես շահեցի»: Համեղ պաղպաղակը տրամադրել էր Աշտարակ-Կաթ ՓԲԸ-ն, որը հանդիսանում է Հայաստանի բարձրորակ կաթնամթերք և պաղպաղակ արտադրող առաջատար ընկերություններից մեկը: Նշենք, որ պաղպաղակի վաճառքից ստացված գումարը կազմեց 100,000 ՀՀ դրամ, որը կուղղվի կենդանաբանական այգու կենդանիների պայմանների բարելավմանը: Հիշենք, որ ժամը 16:00-ից սկսած մինչև ուշ երեկո կենդանաբանական այգու մուտքը մինչև 16 տարեկանների համար անվճար էր:



Բարի լուր

Օգոստոսի 25-ի երեկոյան Երևանի կենդանաբանական այգում 1 Թուրքմենական կուլան (Equus hemionus kulan) է ծնվել: Այգին արդեն 4 Թուրքմենական կուլան ունի: Այս տեսակը գրանցված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում «Endangered» կարգավիճակով, համարվում է վտանգված կենդանատեսակ: Տարածված են հարավ-արևելյան Թուրքմենիայում: Ապրում են չոր անապատային և կիսանապատային տարածքներում, ինչպես նաև բլուրների լանջերին՝ մինչև 300-600մ բարձրությունների վրա: Մնվում են բուսական կերերով:



Հղիությունը տևում է 331-ից 374 օր, սովորաբար ունենում են 1 ձագ: Մայրը կաթով կերակրում է 12-24 ամիս: Կյանքի տևողությունը 15-ից 20 տարի է: 2013 թվականի ընթացքում մինչև օգոստոս ամիսը Երևանի կենդանաբանական այգու սմբակավորների բաժնում ծնվել են 6 Հայկական մուֆլոն, 1 Շոտլանդական պոնի, 5 Կամերունյան այծ, 3 Բեզդարյան այծ, 1 Սիբիրյան այծեղջյուր, 7 Եվրոպական եղնիկ, 1 Թուրքմենական կուլան: Գիշատիչների բաժնում 4 շնագայլ, թռչունների բաժնում 3 սպիտակագլուխ անգղ, 3 արծաթափայլ փասիան:

Շուտով լույս կտեսնի «Ձու» ամսագրի ընթացիկ տարվա հերթական համարը



Երևանի կենդանաբանական այգին 6-ից 14 տարեկան երեխաների համար այս տարի արդեն 2-րդ անգամ տպագրում է «Ձու» ամսագիրը: Ամսագրի նպատակն է երեխաների մեջ սերմանել ուշադրություն, սեր, հոգատարություն իրենց շրջապատող բնության նկատմամբ, ուսումնասիրել, ճանաչել և բացահայտել բնությունն ու կենդանական աշխարհը: Ամսագրի այս համարը նվիրված է երկիր մոլորակի պաշտպանությանը, որտեղ այս անգամ հանդես կգա նոր կերպար՝ Արևորդին, որը երեխաներին կսովորեցնի ինչպես պահպանել և պաշտպանել երկիր մոլորակը: Ամսագրի նոր համարում կարող եք գտնել նաև 6-րդ Համահայկական նկարչական մրցույթի, տարբեր կենդանիների, ինչպես նաև Դիմակահանդես-շքերթի վերաբերող նյութեր, իսկ հեքիաթների սիրահարները կարող են կարդալ երեխաների կողմից գրված ու նկարազարդված 2 հեքիաթ, որոնք գրվել են «Բուկինիստ» գրախանութի և Երևանի կենդանաբանական այգու համատեղ իրականացրած հեքիաթի մրցույթի շրջանակներում:

